ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լանջազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Լանջազատ, (091)582887 , lanjazat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, օրենքի 14 -րդ հոդվածի 6- րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Լանջազատ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 13- րդ նիստի օրակարգը՝ 1. Լանջազատ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին:

2.Լանջազատի համայնքապետարանի 2021 թվականի աշխատակազմի ,թվաքանակի,հաստիքացուցակի և դրույքաչափի հաստատման մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱԿԱՐ

ՍԼՈՅԱՆ ԱԼԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լանջազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Լանջազատ, (091)582887 , lanjazat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27

ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական տուրքերի և վճարների մասին ,, օրենքի 12-14 րդ հոդվածներով, և ,, տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18- րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է՝

՝

2021թ. Լանջազատ համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար. հիմնական շենքերի և շինությունների համար՝

Ա) մինչև 300 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ - 15000 դրամ

բ) սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ 201-ից մինչև 500 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝- 30000 դրամ

-- 501 –ից մինչև 1000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ

--1001-ից մինչև 3000 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 50000 դրամ

-- 3001 – ից և ավել քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար - 100000 դրամ

գ) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

---- մինչև 20 քառ. մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝-3000 դրամ

----20 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ -5000դրամ:

2)Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուց ման վերականգնման, ուժեղացման արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցկառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ - 3000 դրամ:

բ)Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման,ուժեղացման կամ արդիականացման աշխատանքներից՝նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույց-ների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նո շինարարության համար սույն հոդվածի 1- ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ)նախատեսվում է միայն կցկառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստո , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1- ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ .

4) Համայնքիվարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար `200000 դրամ

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում,կրպակներում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգմա ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար 60000 դրաւ :

6) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառ իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ:

7)Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

Ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 2500 դրամ

- 26 – ից մինչև 50 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10500 դրամ

- 51 –ից մինչև 100 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13500 դրամ,

---101 –ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝մինչև 23000 դրամ,

---201 – ից միչնև 500 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնականև ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 30000 դրամ

--- 501- և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնականև ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 50000 դրամ:

Բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամասյակի համար՝

---- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 2500 դրամ,

--- 26 – ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10500 դրամ,

--- 51 –ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13500 դրամ,

---101 –ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ,

--- 201 – ից միչնև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝մինչև 30000 դրամ

--- 501- և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 50000 դրամ:

8) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝ « Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ - 350 դրամ՝ 1 քառ.մ. համար

9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24 : 00 –ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա) առևտրի օբյեկտների համար՝ - 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ – 50000 դր.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ - 300000 դրամ

դ) խաղատների համար՝ - 700000 դրամ

ե) շահումով խաղերի համար՝ -250000 դ

զ) վիճակախաղերի համար՝ – 120000 դրամ

10) Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան , հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

-- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3500 դրամ,

--- 26 – ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

--- 51 –ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տեղական տուրքը սահմանվում է 13000 դրամ,

---101 –ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

--- 201 – ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ

--- 501- և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

--- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

---. 26 – ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

--- 51 –ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

----101 –ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 6000 դրամ,

--- 201 – ից միչնև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13000 դրամ

---501- և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20000 դրամ:

11). Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանարապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների յուրաքանչյուր ամիս 1 քառ. մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք

գովազդող արտաքին գովազդի համար - 2000 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)

արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ

գ) սոցիալական գովազդի համար – 0 դրամ

դ) այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

ե)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% - ի չափով

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբախշել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%- ի չափով :

12) Համայնքի խորհրդանիշը (անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության ,աշխատանքների կատարման ,ծառայությունների մատուց ման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար 100000 դրամ:

13) Համայնքի վարչական տարածքում մարդատար – տաքսու (բացառությամբ երթուղային

տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար,

օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ:

14) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիասակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

15) Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա -ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2 500 000 դրամ

բ. 5 հա - ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 5 000 000 դրամ

գ. 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 7 000 000 դրամ

դ. 10-հա- ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար 10 000 000 դրամ

2. Սույն որոշման հավելվածով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ , բացառությամբ սույն որոշման հավելվածի 3 – րդ կետով սահմանված դեպքերի:

3. Սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3 –րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ :

4. Հայաստանի Հանրապետության Լանջազատ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը,արդիականացումը, ընդլայնումն ու բարե- կարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման,ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած

ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ . մինչև 1 հա - ի համար - 1000 դրամ

-1 հա - ից 10 հա - ի համար – 5000 դրամ

- 10հա և ավելի դեպքում – 10000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 դրամ

6) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ:

Համայնքում իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել հետևյալ սակագներով.

ա. Առևտրի (այդ թվում շուկաների),հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողներ – 35 դրամ / 1 քմ:

բ. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ – 15 դրամ / 1 քմ:

գ. Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ - 6 - դրամ / 1քմ:

դ. Կրթական , մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինություններ - 3 դրամ/ 1 քմ.

7)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար- 1000 դրամ:

8) Սահմանել համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվողների համար հետևյալ վճարները՝

1) կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն – 500 դրամ

2) ծննդօգնություն՝

2.1) թեթև միջամտություն – 1000 դրամ

2.2)ծանր միջամտություն - 5000 դրամ

3)արյուն առում կամ նմուշ առում մանր կենդանի – 100 դրամ,

խոշոր կենդանի – 200 դրամ, բացառությամբ « Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային

միջոցառումների

4)կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարը – 200 դրամ

5)ախտահանություն – 1 քմ – 200 դրամ

6)միջատազերծում (դեզինֆեկցիա) – 1 քմ – 100 դրամ

7)կրծողների ոչնչացում (դերատիզացիա) - 1քմ – 200 դրամ

8) արհեստական սերմանավորում – 5000 դրամ

9) կենդանու հերծում՝ մանր կենդանի - 1000 դրամ,խոշոր կենդանի – 3000 դրամ

10) կենդանու բուժում ՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից ՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի՝ -1000դրամ, խոշոր կենդանի՝- 2000 դրամ

11) կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր կենդանի – 150 դրամ, խոշոր կենդանի – 300 դրամ

12) կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2020 թ. հուլիս ամիսը ,) մանր կենդանի – 150 դրամ, խոշոր կենդանի – 300 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱԿԱՐ

ՍԼՈՅԱՆ ԱԼԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լանջազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Լանջազատ, (091)582887 , lanjazat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

ԼԱՆՋԱԶԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, օրենքի18 -րդ հոդվածի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Լանջազատի համայնքապետարանի 2021 թվականի աշխատակազմի, մշակույթի տան և գրադարանի աշխատակիցների թվաքանակը, ներքոհիշյալ հաստիքացուցակը հետևյալ դրույքաչափերով՝

1. Համայնքի ղեկավար - 275.0 հազ. դրամ

Համայնքային ծառայության պաշտոններ

1. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - 220,.0 հազ. դրամ
2. գլխ. մասնագետ - 200,0 հազ. դրամ
3. առաջատար մասնագետ - 136. 4 հազ. դր
4. առաջին կարգի մասնագետ - 122.7 հազ. դրամ
5. երկրորդ կարգի մասնագետ - 110.0 հազ. դրամ

Պայմանագրային աշխատողներ

1. Հարկահավաք - 128.0 հազ. դրամ
2. Մշակույթի տան տնօրեն - 88.3 հազ. դրամ
3. Գրադարանավար - 88.3 հազ. դրամ
4. Մշակույթի տան պահակ - 91.2 հազ. դրամ
5. Մշակույթի տան հավաքարար- 88.3 հազ. դրամ

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -6

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱԿԱՐ

ՍԼՈՅԱՆ ԱԼԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ